

ապրունքներ, մանավանգ կանանց համար՝ ժառախական ժամանակ, սանր, օծանելիք, մատտնի, ապարանջան և այլն, Հայտնվում էին նաև մսագործներ՝ իրավաբարներ, սպասավորներ, իրաժշտներ, սազանգարներ, փառլեաններ, մուրացկաններ: Սրանք բոլորը զալիս էին մոտակա քաղաքներից: Սկսվում էր իսկական տոնավաճառ իր բողմազանությամբ, արեելան նվագով, երգ ու պարով:

Հաշիվ ու շափեր: Ղղլարցիները հաշվում են այսպես՝ «մինս, ուրկուս, սիրեքս, ուրուս, ոհինգս, ովեցս, ոօխտրս, ոութըս, ոիննըս, ոտասըս, ոտասնըս, ոտասնըս... ոքսանս, ոյառասոմա, ոքառասունս, ոհիցունս, ովացունս, ոօխտանասունս, ոութանասունս կամ ոսաքսանս, ոիննըսունս, ոհարուրս, ոհագարս, Սերունիները հաշվում էին տերոզորմիայի (թեզրեհի) վրա և մաաներով: Հաշվում էին մեկերով ու ոզուխտերով (զուզերով): Նայած առարկային, հաշվում էին նաև աասնյակներով ու ոգուժիներով» (12 հատուվ): Օրինակ՝ ձուն, վարունգը, սեխը, ձմերուկը, հաշվում էին տասնյակներով, իսկ գգալները, դանակն ու պատառաքաղը, ափսեները, բաժակները ընգունված էր հաշվել գյուժինով: Հնում ապրանքի արժեքը որոշելու համար վերցնում էին սրեւ միավոր, անասունը՝ կով, ոչխար կամ աղ, Ըսա այգմ գնահատվում էին և մյուս րոլոր ծախու ապրանքները: Իսկ երր աարածվեց փողը (դրամը), սկսեցին հաշվել կոպեկով և ոուրիշով: Ընդունված էր արծաթ ոուրին և պղնձե կոպեկը: Փողով հաշվելիս ասում էին՝ «մի շայիս» (հինգ կոպեկ), երկու շայիս (տասը կոպեկ), ոմի արասիս (քսան կոպեկ), ուրկու արասիս (40 կոպեկ), ոչորս արասիս (սսաքսան կոպեկ—80 կոպեկ), ոմե մանեթս:

Ղղլարում գործածվող ծանրության շափերն էին՝ «փութ», «գրվանքա», «մսիսալ»: Փութը հավասար է 16 կգ, ֆունաը կամ գրվանքան՝ 400 գրամի, մսիսալը՝ մեկ գրամի:

Երկարության շափերն էին՝ «մղոն», «վերստ», «սամեն», «գագ» (արշին), «գուլազ», «թիղ», 1

մղոնը հավասար էր 7 կիլոմետրի, գազը կամ արշինը՝ 71 սանտիմետրի, 1 սաժենը՝ 3 արշինի կամ 213 սմ, մեկ զուլաշը հավասար էր երկու ձեռքերի ամենամեծ բացվածքին: Բութ մասի և ճկույթի ամենամեծ բացվածքը կոչվում էր թիզ: Հեռավորությունը շափում էին մղոնով, վերսարկ ու սաժենով: Գործածվածքը՝ գազով (արշին), իսկ պարանը շափում էին գուլազով: Տարածությունը շափում էին և քայլերով:

Հեղուկը շափելու համար գործ էին ածուառական շափեր՝ «վեգորս», «շաթվար», «ըութեա», «ասմուշկա»: Գինին՝ վեգորոյում, շաթվարով: Հացհատիկները նմանամես շափում էին ոուսական շափերով՝ մետաղյա ոմերկայով, «կեսմերկով», «շարեքմերկով»: Փայտն ուներ իր շափը, եթե նա վառելու համար էր շալակով կամ այլով, զինարարության համար փայտը կշովում էր կշեռքով:

Հայերի մոտ մի քանի թվանշաններ երրեմն սիմվոլիկ նշանակությամբ էին օգաագործվում: Այդ թվերն են՝ 7, 10, 12, 40: Ասում են՝ «օխտը կըլիսանի գե», «օխտը պորտից...», «տասը շափի, մեկ կտրիս, «քառասոմ օր, քառասոմ գիշեր»: Երր մեկի կինը շատ երեխա էր բերում, ասում էին՝ «փլանի կնիկը մե գուժին երեխա ա պերես և այլն: Հանգուցյալի հիշատակին հոգեհաց էին տալիս մահվանից հաշված 7, 40 օցերին և մեկ տարի անց, որ ժողովուրդը կոչում էր՝ «օխտը», «քառասունք», «տարի»: Ասում էին՝ «մե օրվա ճամփա», «մե գագ ձուն (ձյուն) էկավ» և այլն: Հաշվելիս՝ 13 թվանշանը համարում էին սատանի գյուժին: Երա համար 13 թիվը չէին արտասանում:

Հայր իր ունեցածը՝ հավը, ձուն, ոչխարը, կովը և այլն, հաշվում էր մտքով, որ ուրիշները չիմանան քանակը և աշքով շտան կամ ոչար ոգիները լսեն ու շվնասեն:

Անգրագետ նողայները և շեշենները այգիներում աշխատելիս իրենց աշխօրերը նշանակում էին արգեն նկարագրված փայտե ձողերի վրա, Դա մեծ մասամբ մեկ ամսվա հաշվի համար էր:

## ՆՅՈՒԹԱԿԱՆ

## ՄՇԱԿՈՒՅՑ

Բնակավայր: Ղղլար քաղաքը կառուցված է պլանով, նրա փողոցները իրար զուգահեռ են և ուղիղ: Քաղաքի միջով անցնող զիխավոր ջրանցքը նույնակա զուգահեռ է հարեան փողոցներին, թո-

րանցքները այնքան նեղ են, որ նրանցով կարող է անցնել միայն մեկ կառք:

1843 թ. ճանապարհորդ Յու. Շիլովսկին այսպես է նկարագրում Ղղլարի արագին տեսքը. «Քաղաքը բաժանված է մի քանի թաղամասերի, Կենարոնում Բերդն է, որից դեպի Հյուսիս-արեւելք արածվում է «Հայոց թաղը», որը աեղական թաթարները անվանում են «Ալմենթիր»։ Հայոց թաղին կողակից է վրացական «Քորցիառլ» թաղը, իսկ հայոց թաղի հակառակ կողմում արածվում է «Թեղիկ առվը», որը բնակվում են պարսիկները, կումիկները, նողայներն ու կաղանթաթարներն Բերդից դեպի հարավ գտնվում է զինվորական ավանը, որտեղ ապրում է ոուս զինվորականությունը։

Մեծ շուկան, որը կոչվում է «Հայկական», զրաղեցնում է մի լայն հրապարակ՝ բերդից դեպի Հյուսիս. թաթարական կամ փոքր շուկան աեղավորված է «Թեղիկ առվ» թաղում, մինարեթի մոտ։ Մեծ շուկային շատ մոտ է առեթարական շարքը, որը կոչվում է «Քարվանսարա»։ Այս շարքը, որն ամրողովին աղյուսից է կառուցված (պահպանվել է), դանվում է դիմավոր ջրանցքից դեպի հարավ։ Առեթարական շարքին կից տեղավորված են գրեթե բոլոր արհեստանոցները։

Հայ հարուսաների անելը դանվում են դիմավոր և կենարոնական փողոցներում կամ, ինչպես ասում են՝ Հայոց թաղում։ Տները երկու կամ երեք հարկանի են, քարից, որոնք մինչեւ օրս էլ դանվում են լավ վիճակում։

Հայոց գերեզմանատունը քաղաքից դուրս է, երեք կիլոմետր հեռավորության վրա։ Քաղաքից դուրս են և ոռուսական ու մահմեդական գերեզմանոցները։

Մինչեւ XX դ. սկիզբը Ղղլարի ընակլությունը խմելու համար օդապորտում էր թերեքի շուրը; Նախապես այն մաքրելուց հետո՝ Սակայն երր թերեքի շրերին խառնվեցին վաակի նավթափառն շրերը (Առնժա գետի վրա է դանվում Գրողնի քաղաքը), թերեքի շուրը խմելու համար դարձավ ոչ պիտանի, Սկսեցին օգտվել րակերում փորվող ջրհորներից։ Զրհոր լունեցողներին վարձով ջուր էին մատակարարում շուրջիները (Հատուկ ջրկիրներ)։

Միայն սովետական իշխանության օրոք Ղղլարն ստացավ ադրյուրի մաքուր ջուր։ Առաջին հերթի արտեղյան ջրհորը փորվել է 1925 թվականին, երկրորդ հերթինը՝ 1932 թվականին,

Զրհորների խորությունը մի քանի տեղ հտանում է մինչեւ 300—500 մետրի, ներկայումս Ղղլարը ապահովված է խմելու ջրով։

\* \* \*

Ակսած 1735 թվականից մինչեւ XIX դ. կեսերը Ղղլարը րաժանվում էր երեք մասի՝ Բերդ, Կենարոնական քաղաքը և Զինվորական թաղ։ Բերդի մասին հուսկել է, Զինվորական թաղը գտնվում էր Բերդից 3—4 հարյուր մետր դեպի արեմուաք։ Սյա թաղը այժմ կոչվում է Ալարոտկա։ Այստեղ ապրում էին պահեսահ զինվորներ, զանազան պաշտանյաներ, հաշմանգամներ և զինվորականների կանայք։

Հիմնական քաղաքը փաղած էր բերդից դեպի արեկելք, որը րաժանված էր մի քանի թաղամասերի՝ անջատված Հողապատնեշներով։ Հայոց թաղը կամ քաղաքի կենարոնը բնակեցված էր միայն հայերով։ Հիմնականում հայերը Ա. Խաչից Ղղլար են եկել 1735 թվականին, սակայն մինչեւ այդ, հայերը Ղղլար ավանում բնակվել են դեռևս XIXIII դ. սկզբներից։ Հայերի գաղթը Ղղլար շարունակվել է ամրող ԽVIII դ. ընթացքում։ Գաղթականների մի մասը, ոյուղացիական ծագում ունեցողները, ինչպես նշվել է, Ղղլարից 18 կմ հեռավորության վրա հիմնեցին հայկական թեքեթեյ դյուզը։ Վրացիները, որցի քուրցեառլ թաղից, բնակություն հասաւատեցին նաև Ղղլարի շրջանի երեք դյուզերում՝ Սասովիլա, Փարփուզ և Սարագիան։

Մյուս թաղը ռՔրիստիանուն էր, ուր ապրում էին քրիստոնեություն ընդունած կովկասյան աղգություններ, որոնք նույնպես եկել էին Ս. Խաչից։

«Օկոչիրների» թաղում կամ «Օկոչիրառուլում» ընակվում էին օկոչիները կամ չեղենները։ Իսկ կաղանթաթարների կամ «Կաղանթեառլ» թաղում ապրում էին կաղանթաթարներ։ Դրանք կաղթաթար թաթարները, Դրանք կովկաս էին եկել դեռևս Պետրոս Առաջինի արշավանքի ժամանակ՝ որպես թարգմանիչներ։ XX դ. սկզբին նրանց մեծ մասը աեղափոխվեց Գրեքենսկայա բնակավայրը, ուր և ապրում են մինչեւ օրս։

«Թեղիկ առվ» թտղը մահմեդական բնակչության կենարոնն է։ Այստեղ էին ապրել տաճիկների ու կումիկների նախնիները, որոնք Ղղլար էին եկել մինչեւ 1735 թվականը։ Արանք են եղել

Ղղլար ավանի առաջին բնակիչները և դրանց լեզվով է Ղղլարը ստացել իր անունը: XIX դ. սկզբում Ղղլարում հաշվվում էր մոտ 220 թեղիկ բնտանիք: Մի առանձին թաղ էր նաև գերր նշված Հնդկական գաղութը: Այն դանվում էր այժմյան քաղաքային հիվանդանոցի մոտ: Այսպիսով, XIX դ. սկզբին Ղղլարը բազմազդ, խոշոր, ասիական աիշայի քաղաք էր: Տները հողե տափակ տանիքներ



15. Ղղլարի գլխավոր փողոցը մինչև 1917 թ.

ունեին. ճակտոտվ, լուսամուտներով ուղղված էին րակի ներս: Թերդից դուրս աների մեծ մասը կառուցված էին փալաքից, սասմանից (Հարդակ-խառն) և շշափարից: Ավաղակային հարձակումներից պաշապանվելու նպատակով աների առջե դրվում էին դարձր պատեր:

Մինչև 1820 թ. Ղղլարում եղել է նաև «Եսիր րազար» (գերիների շուկա): Առողջի ավաղակները, փող կորղելու նպատակով, դողանում էին քրիստոնյա աղդերի (Հայ, ուսւ, վրացի) կանանց և կրիստոներին և վաճառքի հանում նրանց շեսիր րազարում: Գերիների արժեքը արբերէ է եղել, 10-ից մինչև 60 ոսորի: Փոխել են ավելի շաա հացով, աղով, վառողով և այլն:

Ղղլարի պատերը ամրողական չի լինի, եթե չնկարագրենք քաղաքի ծայրում, աղբանոցներին կպած մի թողամասի մասին ես, որ կողմում՝ էր «Յամանառուս»: Այստեղ ապրում էին բնակչության ամենաշքավոր խավերը:

Իրար կողքի՝ 15—16 անշուք հողաշեն տները, որոնց փոքրիկ բակերը մեծ մասամբ անպարիսպ էին, սպիտակացված էին կրով կամ ծեփված կտվով, Տների հատակները՝ հող, կահավորությունը՝ համեսա, աղքամիկ: Այստեղ ապրողները իրար ճանաշում էին, ամրող թաղն ապրում էր

մի բնտանիքի պես: Գիտեին միմյանց հոգսերու, նիստ ու կացը և այլն:

Փողոցը ծածկված էր կանաչով: Գտոներն ու հորթերը արածում էին: Պատերի տակ երեկոյան հովին նստում էին աշքը ճամփին, ամուսիններին սպասող կանայք ու զրուցում էին: Նրանց կողքին վազվում էին բազմաթիվ կիսամերկ երեխաները, որոնք առավոտից մինչեւ երեկո դրեթե փողոցում էին: Խսկ եթե հանկարծ մի որեէ հարուստ աղա կառքով անցներ այդտեղով, ապա երեխաները կվտզեին այդ կառքի ետևից՝ մի որում ողորմածություն ստանալու հույսով:

XIX դ. սկզբին Ղղլար քաղաքի համար մշակվեց ճարտարապետական պլան, որի համաձայն քաղաքի փողոցները դասավորվեցին ուղիղ և իրար զուգահեռ: Ստեղծվեց մի մեծ հրապարակ՝ բնդարձակ շուկայով: Շուկայի երկարությամբ, արևելյան կողմից, տնկվեց զրոսայդի՝ բարդիներով, ուղենքներով, բաղմատևսակ ակացիաներով և ստվերախիտ կաղնիներով, որոնցից շատերը մինչև այժմ էլ կանգուն են ու զարդարում են քաղաքա-



16. Ղղլարի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:

յին այդին: Հետադայում քաղաքը շինարների ծառուղիով միացվեց բերդին, կառուցվեցին դպրոցներ, շենքեր, եկեղեցիներ, մզկիթներ:

Նոր կառուցված խանութների և արհեսանոցների շաբաթերը բաղկացած էին վեց միհարկանի մասնաշենքերից: Ցուրպանշուրը մասնաշենք ուղարկու կողմից հենց աղյուս սյուներին: Մասնաշենքերի երկու կողմից՝ խանութների և սյուների միջե կաապրում էր անց ու դարձր: Այն ժամանակ առեարի այս շաբաթը կոչվում էին «քարվանսարաներ»: Դրանց մի մասը պահպանվել է ցայսօր և օդագործվում է որպես պահեսա:

Քաղաքի աեսքը փոխվում է միայն XIX դ. կեսերին, երբ սկսեցին կառուցել քարե 2—3 հարկանի նոր աներ՝ գլխավոր փողոցի վրա: Դրանք ուներների շենքերն էին: Ղղարում փողոցներից մեկը կոչվում էր «Մենձ քուշա»: Աս սկսում էր բերդի մոտ, գնում ուղիղ գեպի ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, հետո թեքվում էր աշ, անցնում ս. Ասավածածին եկեղեցու, ապա թաթարական շուկայի մոտով և վերջանում թերեքի մոա:



17. Ցերկովնայա փողոցը:

Ղղարի մաքրության մասին կան ճանապարհորդ Յու. Շիղովսկու ապավորությունները, որ նա գրել է «Հուշակեր Ղղարի մասին» իր գրքում (1843 թ.): «Այսաեղ փողոցների մաքրությունը ասիսկան է: Ամուսնը սաստիկ փոշի, իսկ զարնանը և աշնանը՝ սասահիկ ցեխ: Հաճախ կարելի է ականատես լինել, թե ինչպես գինով լի աակառով արարան երկար ժամանակ մնում է ցեխի մեջ խրված, մինչև նրան օգնության հասնեն: Թաթեռով (շրանցքը) և առուները, որոնք անցնում են քաղաքի միջով, իրենց մեջ չեն վերցնում փողոցների աղաեղությունը, որ շաա կարենը է քաղաքի մաքրության աեսակեաից: Վաա աւագվորություն է թողնում նաև այսաեղ-այնաեղ կուաակված շշապըան» (աղքը), որը ներկում և ապականում է օգը:

XIX դ. 30-ական թվականներին քաղաքի փողոցները քիլ թե շաա կարգի բերվեցին՝ աների առաջ շինվեցին փայաե մաթեր և առաջին անգամ փողոցները լուսավորվեցին բարձր սյունի վրա կախված լամպերով: Սակայն փողոցները մեծ մասմ անուններ չունեին: Փոստաաարները հիշողությամ էին բնակիչներին հանձնում փոստը:

Քաղաքի բարեկարգումը շափագանց գանգաղ էր առաջ զնում, քանի որ ցարական կառավարությունը միջոցներ չէր արամագրում այդ կարևոր գործի համար:

Սովեաական իշխանության համատումից հետո միայն հիմնովին բարեփոխվեց քաղաքը: Կրկնակի բնդարձակվել է XIX դ. տնկված քաղաքյին դրուայգին, նախկին «Մենձ քուշան» այժմ կոչվում է Սովեաական: Աս բարեկարգված ու ասֆալտապաված փողոց է, որը մի աեսակ ըզբուավայր է զարձել բնակիչների համար: Այդ փողոցում ավառերթեեկությունն արգելված է: Այսօվա Ղղարը առաջագիմող բարեաեսք քաղաք է:

Շենքերը: Քաղաքի գլխավորապես մի հարկանի տները ունեին երկարավում կառուցվածք՝ 2, 3, 4 սենյակներից, որոնց ճակատները ուղղված էին ավելի գեպի հարավ: Տան պաաերը միշին հաստության էին: Մուաքի գոները շինգում էին աան երկու ծայրերին: Լուսամուաները սովորաաը մեծ չէին և բացվում էին պաաի միշից, թե՛ մեծ, թե՛ փոքր տները անխաիր բակի կողմից



18. Գիմնազիակայա փողոցը:

ունեին բաց պաաշգամը, որի ծածկը հենգում էր փայաե սյուներին: Եթե առնը երկհարկանի էր, ապա վերև աանող սանգուղքը կառուցվում էր բարձր կողմից: Կերին հարկը աանտիրոջ հիմնական բնակարանն էր, սաորինը՝ խոհանոցը, պահեսար, մառանը:

Աենյակների հաաակին փոված էր լինում գորգ, փալաս, պաաերի աակ՝ լայն թաթաեր՝ բարձրերով ու սմութաքաներով: Պաաուհանները վարագուրվում էին:

Հին պապենական սովորությամբ առևն կառացելիս, հիմքը օրհնելու համար հրավիրում էին քտնանա, իսկ այն ավարտելուց հետո, մտտաղ էին մորթում, քեզ անում: Ղղլարի հայերի ընակելի շենքերը, գոմերը և վառարանները ուղղ շափով կրել են հարեան աղգերի (կոմիկներ, կազակներ) ազգեցությունը: «Ղղլարում փայած տներ՝ հիմքը քտրից, շատ կան Կան մեծ և գեղեցիկ տներ, գրանցից մի բանիսի ճակատին փայլում են առյուծի գլուխներ կամ մի այլ գարգարանք—նշում է Շիդովակին:

Հարուստ հայերի աները կառուցվում էին րակի կողմից երկու պաաշգամբով («էյվան»): Տան մի մասը զբաղեցնում էին կանայք, որն անջատված էր տղամարդկանց մասից: Մառայողների համար բակում լինում էր խրճիթ, որին կից գտնվում էր կոմը: Ընդարձակ բակի մի մասը զբաղեցնում էր օղու «գործարանը»: Մնացած հողաարածությունը ամրողցովին հատկացվում էր խաղողի այգուն: Բակի ետեի մասում սովորաբար շարվում էին գինու խոշոր տակառները և այգեգործական զանաղան գործիքներ: Բակի ամենահեռավոր անկյունում գտնվում էր արտաքնոցը:



Չքավորների տները կառուցվում էին շատ պարզ, հողաշեն, բայց ոչ գետնափոր: Ղղլարում գետնափոր տներ գոյություն չունեին: Կառուցվող տան շորս անկյուններս կանգնեցվում էին հիմնական սյուները, և գրանց միջե եղած աարածության մեջ գարձյալ մի քտնի փայտե սյուներ: Դրանք միմյանց կապվում էին «շափառով», որը հյուսվում էր եղեզնի կամ «թալի» (ուտենու) ոստերից: Ցանկապատը հասցնում էին մինչե սյուների գագաթը, արանքները լցնում հողով: Ցանկապատը գրսից և ներսից ծեփում էին շաղախով, որը պապի, կավի ու դարմանի խառնուրդ էր, և հետո սպաղում: Այս տիպի տների կտորը շինվում էր կորածե, ծտծկվում եղեգնի խորձերով ու ծեփում նույն շաղախով: Պատերը շորանալուց հետո սպիտակացնում էին կրով:

Տան առաստաղը լայնքով մի պապից մյուսը զցված հորիղնական փայած գերաններից էր, որոնք ամրացված էին պատի սյուներին, ապա սրանց վրա պատերի երկայնքով գրված էին նախորդներին խալզող ծանր գերաններ: Սրանց վրա տախաակներ էին, որոնք երրեմն սպիտակեցված էին լինում կրով:

Կային և փայտե աներ, որոնց հիմքը քարից էր (աղյուս): Այս տների կառուները լինում էին

երկթեք՝ տախտակից կամ թիթեգներից, ներկված կանալ կամ կարմիր գույնի: Ընդհանրապես Ղըղլարում հաըթ կառուներ չկային:

Ոմանք իրենց հողաշեն տների պատերը շորս կողմից ծածկում էին տախտակով՝ գետնից մեկ մետր բարձրությամբ: Այդ արվում էր այն նպատակով, որ պատը շորանալուց հետո լթափվի: Հողային աշխատանքները կատարում էին պարսկեները, որոնք աշխատառում էին վարձով: Նրանք դահով և սուներով խառնում ու տրորում էին ցեխը և սվաղում:



19. Փայտաշեն առևն և Տախտակափեր. 1. բնակելի, 2. բնակելի, 3. նախասենյակ, 4. բնակելի, 5. խոհանոց, 6. բնակելի: Առաստաղի բարձրություն՝ 2,30 սմ, բնակելի մակերեսը՝ 67, 62 քմ:

Տան ներսում, ինչպես նշվեց, լինում էր մի քանի սենյակ: Ամենամեծ սենյակը՝ քառակուսի «ղալը», հտակացվում էր հյուրերին, մյուսները ծառայսւմ էին որպես ննջարան և սեղանապուն: Տունը անպայման պետք է ունենար նախասենյակ ու շշուլան: Վառարանը (փելը) կառուցվում էր այնպես, որ գտնվեր երկու սենյակները միացնող պատի մեջ: «Ձալը» մեծ մասամբ գտնվում էր աան ծայրում և համարյա առանձնացած էր մյուս սենյակներից, ուներ իր առանձին վառարանը: Վառելանյութը փայան էր: Վերջինս Ղղլա-

րում ամենաթանկ առարկաներից էր: Չմուանը այս վառարաններում թիսում էին հաց և ղանաղան թիվածքներ:

Տան գոները մեծ մասամբ մի փեղկանի էին և փակվում էին ներսից ռչիվթով՝ կամ ամանդաւով, իսկ գարպասի երկու փեղկանի դռները բակի կողմից փակվում էին «գոնզաղով» (սողնակ): Դոնղաղը փայտա դերան է, որն աղաաշարժվում է դարբասի սույներին ամրացված երկաթյա երկու օղակների միջեւ: Գիշերը գարպասի գոները կողպում էին:

Ընաանիքի անդամները գիշերը քնում էին մեծ թախափ վրա, որը րոնում էր սենյակի համարյա կեսր Նորապսակներին հաակացվում էր առանձին սենյակ, որը կոչվում էր «զուզան» (սա չպեաք է զփոթել ոռւաերեն չուլանի հեա, որը նշանակում է նկուղ): Հյուրերին հատկացվում էր հյուրասենյակը՝ իր բոլոր հարմարություններով:

Տան հաեի մասում լինում էր մի սենյակ, որ պահում էին մթերքները՝ բանշարեղեն, մրգեղեն, կախանի խաղող, յուղ, թթուներ, «զուզրմա» և այլն: Պատի վրա շինում էին մեծ պահարան, որի դարակներին դրվում էին փոքր ամաններ, ռպուլիկներ», իսկ հաաակին, հողի կամ աղցուաների վրա՝ թթուների մեծ ամաններ: Շաա աներում կային և գեանափոր մապաններ, ուր պահում էին շուա փշացող մթերքները: Մթերապահեսաի անօրինությունը աաանիկնոցն էր: Գինու համար կար հաաուկ մապան, ուր շարքով դրված էին դինու աակապները: Դրանք հողին շղնելու համար՝ աակը դնում էին իրարից մեկ մեար հեռավորությամբ գուգահեռ երկու հասա դերան:

Եթե աաանաերը ուներ կով, դոմեշ կամ ձի, ապա կովն ու դոմեշը պահվում էին գոմում, իսկ ձին՝ ախոռում: Գոմը և ախոռը դանվում էին բակի հաեի մասում: Սրանց մոա էր և տարայը, ուր դարսվում էր վառելափայար և պահվում անասունների խոար:

Բակի մեշաեղում էր գանվում շրջորոր: Ղղլարի քաղաքային վարչությունը պահում էր հաաուկ սանիարական սալլեր, որոնք որոշ վարձարությամը հավաքում էին բակերի աղը և մաքրում արաքնոցները:

Տունը շար աշքից պաշապանելու համար դուան շեմքին պայտա էին փակցնում: Նոր առան փոխադրվելիս ղղլարցին մասաղ էր անում և միսը բաժանում հարեաններին, որ նոր օջախը «բարով ու բարաքաթով» լինի:

Շաա վաղուց Ղղլարում գոյություն ունեին երկու աիպի աղացներ՝ հողմաղացներ և շրաղացներ թերեք զեափ վրա:

Կանակում և ամաներ: Ղղլարցին իր ըգգեսար պահում էր «զանգուղներում» (սնգուկներում), իսկ ամանեղենը՝ աեղական վարպեաների ծեռքով պաարասաված պահարաններում:

Կանանց, նորահարսի զեսանները և ղարդարանքները պահվում էին հաաուկ սնդուկներում, որոնք արաաքինով շաա գեղեցիկ էին՝ զարդարված մեաաղյա դույնդույն նախշերով: Բացի այդ, որանք կողպվելու և րացվելու ժամանակ դայն էին հանում:

Հնում ճաշելու ժամանակ գործ էին ածում ցածրիկ սեղաններ, որի շուրջը հաակին փուստ էին թազիք, իսկ դորդ էլեմենտները կամ անկյունում ու վարագուրում «չարսավով» կամ գեղեցիկ գիալիով: Կահ-կարասաիքը և կավե ամանները մեծ մասամը պաարասավում էին աեղսւմ: Հնում գործ էին ածում գդալներ և խոր ամաններ: Այդ և այլ հարմարավեա իրերը սաացվում էին Ռուսասանից:

Տունը աեղը թախան էր, որի վրա գցում էին թազիք կամ գորդ, իսկ քնելիս՝ նաե ներքնակ և այլ պարագաները: Ցերեկը անկողինը հավաքում էին և կանոնավոր դարսում թախափ մի անկյունում ու վարագուրում «չարսավով» կամ գեղեցիկ գիալիով: Կահ-կարասաիքը և կավե ամանները մեծ մասամը պաարասավում էին աեղսւմ: Հնում գործ էին ածում գդալներ և խոր ամաններ: Այդ և այլ հարմարավեա իրերը սաացվում էին Ռուսասանից:

Տունը աաքացվում էր փայտե վառարանով, որի միջի բոցը ու միայն տաքացնում, այլև լուսավորում էր սենյակը: Սենյակը ավելի ապք և լուսավոր դարձնելու համար թեժ կրակը առաջ էին քաշում դեպի վառարանի բերանը: Սովորաբար, անեցիք նսաում էին վառարանի դիմաց: Երր բոլոր փայտերը վառվում էին և մնում էր միայն կրակը, ակիշով դրանք մի կողմ էին հավաքում և փակում վառարանի դոնակն ու ծինելույզի շերմանցքը:

Տունը լսասավորելու համար գործ էին ածում նաե մոմ, ճրագ: Ճրագի պաարուցքը վառվում էր ղեյթոնի յուղով: Յուղի ճրագին հաջորդեց նավթինը, ապա ապակիով լամպը: Սյն կախում էին պատից, որ լուսավորվի ամբողջ սենյակը: Մինչև լուցկին, կրակ սաանալու համար օդաագործում էին «զավն ու շախմախր»: Միայն 1923 թ. Ղղլարի աներն ու փողոցները առաջին անդամ սաացան էլեկարական լույս:

Ղղլարի հայ վաճառականները, մշական կապ ունենալով Ռուսասանի առեարական խոչը կենարունների հեա, նոր ապրանքների հեա միա-

սին՝ Ղղլար էին րերում և ժամանակի նորածեռություններ, որոնք վերաբերում էին զդեսախն, կոշիկին, կահ-կարասուն, կանանց զարդարանքներին, մաղկրի նոր սանրվածքին և այլն։ Անցյալ դարի 60-ական թվականներին Ղղլարն արղեն կարող էր պարծենալ ոչ միայն իր երկու-երեք հարկանի քարե հոյակապ տներով, այլև կենցաղային այնպիսի առարկաներով (գարդեր, կոմոդ, րուֆետ, մեծ հայելիներ, տրյումո և այլն), որոնք դավանական քաղաքի համար միանգամայն նորություն էին։

Ծքեղ էին կահավորված ունկորների աները։ Սքանչելի գորդեր պատերին, հատակին, ջահեր, ոշամղաներու, հսկայական հայելիներ, որոնք փայլ էին տալիս կահույքին, պատերին։ Եվ ամեն ինչ դասավորված նուրը ճաշակով։ Որեէ առնի կամ առնախմբության առթիվ սեղանը զարդարվում էր ոսկեղեն ու արծաթեղեն իրերով՝ դինու թասերով, դղալներով, մատուցարաններով, ծաղկամաններով, որոնց վրա փորադված նուրը զարդանախշերը հիացմունք էին պատճառում։


Ղղլարցիները սիրում էին իրենց տան պատերը զարդարել կովկասյան հինավուրց ղենքերով, զրահներով, եղնիկների եղյուրներով և թոշունների խրտվիլակներով։

Ղղլարում դործածվող ամանների ախակները շաա բաղմաղան են։ Ամանների մի մասը հասկացված է ջրի և դինու համար, մյուաբ՝ կերակուր եփելու, երրորդը՝ կերակուր բաժանելու, չորրորդը՝ ձմեռվա որեէ պաշար պահելու (յուղ, մեղր, դղալը և այլն)։ Ամանները կավից են, պրոլոնձից և փայախց։

Կավից մեծ կարասներ չեն եղել։ Գինին պահել և պահում են մեծ՝ 60—80 դուլլանց փայտե տակաւություն։ Ամենախոշոր կավի ամանը «փարչն» է, որի աաբողություննը 4—5 դուլլ է։ Փարչն ունի երկու ունիկ, փորր բավականին ուռուցիկ է, բերանը լայն։ Մրանից ավելի փոքր է «կուժք», որն ունի բարակ պարանց և երկու ունկ։ Այս երկուն էլ ջրի ամաններ են։ Լայն, ցածրիկ, հասափոր աման է «քրեղանը», որի մեջ պահում են մածուն կամ արդար յուղ։ Թեժ ածուների վրա դրվող քրեղանի մեջ պատրաստում են սփիթից, սփաշը և այլն։ Մյուար դա «քիլլան» է, որը երկու ունկով բարձր աման է, ուր պահում են ախակ-տեսակ թթուներ (թուոչի) կաղամրից, վարունդից, խաղողից և այլն։ Քիլլայի բերանը փակում են լաթով կամ մարլայով։ Գործ են ածուն

նաեւ փոքր չափի կավի ամաններ՝ աղամաններ, ճրագամաններ, բաղիաններ։ Կավի ոշանաղը (լինում է և փայախց) ու ոշաքաշենք (փիալա) դործեն ածում կերակուր ուտելու համար։ Շաքաշայով ողակմուղից թեյ էլ են խմում։

Պղնձե ամանները մեծ մասամբ դեղեցիկ նտիշաղարդված են։ Պաաահսւմ են զեղարվեստական բարձր ճաշակի դործեր։ Տանակիկինները



20. Ամաններ։ 1. «Քիլլա» (կավից), 2. «Բաթմա» (պղնձից), 3. «Քրեղան» (կավից), մածուն կամ յուղ պահելու համար, 4. «Ծորր» (փայախ), ալյուր պահելու աման, 5. Կավի շրաման, 6. Փայտե «կող», 7. Փայտե դղալ, 8. Փայտե «շերեփ», 9. Պղնձե «հավանդ-դաստան», 10. «Մինի», 11. Չուգունն կափսա («զաղան»), 12. «Թարաղ» (փայտ), 13. «Շաքաշա» («փիալա» փայտ), 14. «Ան-տախտակ» խմոր հոնցելու համար

առանձին հաճուքով ի ցուց են դնում այդպիսի հարուսա ամաններներ։

Պղնձե ամենախոշոր ամանը «քաթման» է, որը դործ է ածվում միայն ջրի համար։ Բաթմանի (աես նկ. 20<sup>2</sup>) ներքեի մասը ուռած է, իսկ պարանոցը՝ բարակ։ Ունի մի ունկ և պուռնկ։ Պղնձից են «հավանդն» ու դաստան՝ աղ, շաքար, նուշ,

կաղին, ընկույզ և այլ կարծր իրեր մանրացնելու համար, իսկ ռկոշը լինում է թե՛ պղնձից և թե՛ փայտից: Սրանով հեղուկը մի ամանից լցնում են մյուսը: Կա և լվացքի լայն ու կլոր ռաաշաւ: Ավելի փոքր չափի տաշտը կոչվում է «լագան», որի մեջ եփում են մուրարա: Նախքան եփելը ուղագանը կավճով կամ հատուկ պասաայով լավ մաքրում են, որից լագանը ուսկու փայլ է սաանում: Կան և կաթսաներ, որոնց մեջ կերակուր են պատրաստում:

Փայտե տաշտը երկարավում է, խմոր հոմացելու համար: Սրա միշից հոմացած խմորը տեղափոխում են սեղան-տախաակին, որի վրա խըմորը ռօխլովով բացում և ապա նույն աախաակի վրա գանակով ռորշտառ են կտրապում, նազուկ, փախլավա շինում: Փայաից են նաև ռթարազն ու սինին: Թարազը կլոր, աափակ աման է, սինին՝ երկարավում և ափելի փոքր, քան թարազը, երկուան էլ գործ են ածում մրգերի համար: Փայտե զորդի մեջ, որը զափաղ (կափարի) ունի, պահում են ալյուր կամ աղ: Պատահում են զորդեր, որոնք ունենում են գեղեցիկ գարգաքանդակներ: Փայաից են և սիստոր ծեծելու ամանը և փոքր տակառի նման սեղմարիլը (ինոցին):

Երկաթյա թիթեղից է կովկիթը, որը լայնարերան աման է՝ կաթի շիթերը դուրս շթափելու համար: Կովկիթն ունի պունկ: Կա և թուզե կաթսա (զազան), որի մեջ զանաղան անսակի կերակուրներ են եփում: Նույն մեսապից թավան ունի լայն հատակ և երկար կոթ: Սրա մեջ պաարաստում են ռժվածեղ, տապակում միս, հավ, գետնաինձոր, բովում կաղին, սոխ և այլն: Կար նաև ռքից գոմազը կամ ընդհանրապես աղբի համար:

Ալյուր, ցորենը, եգիպտացորենը՝ պահում էին մեծ տոպարակներու՝ տանր կամ մատանում: Տոպարակները գրվում էին տախտակների վրա, որոնց տակ գերաններ՝ խոնավությունից պաշտպանելու և մկներին հետապնդող կատուների աղատանց ու գարձի համար:

Երբ որեէ աման զան կամ մկան կողմից պղծվում էր, զղարցին այն ռհառամված էր հտմարում: Ալյափիսի ամանը լվանում էին եկեղեցուց բերված ռօխաններ՝ խոնավությունից պաշտպանելու և մկներին հետապնդող կատուների աղատանց ու գարձի համար:

Կերակուր և խմիչք: Ղղլարում գործ էին ածում մսեղեն, բուսեղեն, ձկնեղեն և կաթնեղեն կե-

րակուրներ, Ղղլարը միշա էլ հարուսա է եղել ամեն աեսակ մթերքներով: Հացահատիկների մեջ առաջին տեղն է րոնում ցորենը, որից հետո՝ եղիպաացորենը (սիմինգրը), Տանր թխված հացը գերագասելի էր քաղաքային փուրմ թխվածից: Ղղլարում բնգումված հացերի աեսակներն էին՝ լավաշը որը հիշեցնում է երեանի մատնաքաշը, ռթոնգրի (թոնրի) հաց, ռուլկա, սիմինգրի և կորեկի հաց: Հացը թթվեցնում էին թխմորով, հունցում և թխում: Սուանց թթխմորի յուղով պատրասպող հացը կոչվում էր ռպագաճ:

Էին ժամանակ հացը գանակով շէին կարում, մեղք էին համարում: Հավաաում էին, որ գրանով կտրած հացը կարցնում է աան ռրարաքաթր, ուսահ և կտրում էին ձեռքով: Հացով երգվում էին՝ ռէս հացը վկա: Հացը սեղանի ամենահիմնական ուտելիքն է: Հացը ճաշի նշանակություն ունի: ասում են՝ «Հաց ուտենք», ռՍղ ու հացով մարգ է», որ նշանակում է, թե այսինչ մարգը հյուրասեր է: Հացը գեանին գցելը մեղք էր: Մեր պապերը գեանին ընկած հացը վերցնում էին և համրուրում: Տանր հաց թխողը տաան էր կամ ավագ հարար, թացի հացից, Ղղլարում թխում էին տեսակ-տեսակ անուշ թխվածքներ՝ ռնաղուկ, ռփախլավա, ռողջաա-հալվա, ռգաթա, ռնշով հաց, ռգաթլամա և այլն: Զանաղան առների առթիվ պատրաստում էին համապաասիան ուտելիք: Օրինակ՝ ս. Սարգսի տոնին գիշերը շինում էին ռփողինձա: Ցորենի ձավարը րովում էին յուղով, քաղցրացնում մեղրով կամ շափարավաղով և մանրած ընկույղով ու շամիշով:

Շնավիցը շինում էին ցորենի կամ եղիպաացորենի ալյուրից: Ալյուրը յուղով րովում են և ապա զրի հեա խառնում ու կրակի վրա ևփում: Շնավիցը, որ ուասում են մեղրով և ծեծած գարշինով, ծննդկան կնոշ առաջին ուաելիքն է: Երբ երեխան աաամ է հանում, այդ առթիվ ընդունված է եփել կորկոտ, որը պաարասավում է շափարազը և քիշմիշով համեմված ցորենի հատիկներից:

Սովորարար տանը թխված ռթաժա (նոր) հացից տալիս էին հարեանին:

Ընդունված էին որնձից կերակուրներ, Ամենասիրվածը փլավն էր: Փլավի աեսակները տարրեր էին՝ շիլափլավ, ռփիրայովա փլավ, չոր մրգով փլավ, փլավ ռօրագուի, խորովածով, կաթնով, ռղրյմովա փլավ, նշով, շամշով փլավ և այլն:

Ղվլաբը շափտպանց հորուսա է ուտելի կա-  
սաւեղենով և րուժիլ խստերով։ Հայի սեղանն  
առանց կանաչի չի լինում՝ սամիթ, թարխուն,  
համեմ (կինձ), կոտեմ, բողկ, «ծիծակա», ոեհան,  
«պիտնտ», կանաչ սոխ, վարունգ և այլն։

Սիրում են և շորացրած կանաչեղեն, որը դորձ  
է ածվում աւպուրի և մսեղեն կերակուրների հետ։  
Ղվլաբը հարուսա է րանջարեղենով։ Պատրաս-  
տում են մեծ քանակությամբ ձմեռվա պաշար,  
տեսակ-տեսակ թթուներ, աղծուներ և մարինադ-  
ներ՝ լոլիկից, վարունգից, կաղամրից, ձմեռու-  
կից, սոխից, խաղողից և այլն։ Թթուների համար  
գործ են ածում կավե և ապակյա խոշոր աման-  
ներ։

Չմեռվա պաշար են անում նաև մրգեր չո-  
րացնելով։ Չամիչը, թաթարուն, սոսունուր և գո-  
շտրը ընաիր ուտեսաներ են։ Նոր արավա գիշերը  
և մեծ տոներին վերոհիջալ քաղցրավնիքը հր-  
րամցվում էր երեխաներին, մեծերին։

Ղվլաբի կախանի խաղողը թարմ է մնում մի  
քանի ամիս։ Կանայք գիտեն սալորից, բալից, կե-  
ռասից, ծիրանից, գեղձից և սերկելիլից պատ-  
րաստել մուրարաներ։ Մուրարա են պարասառ.  
Նաև բաղրիջանից և բնկույղից։ Բաղրիջանից մու-  
րարա պատրաստում են այսպես։ Նախ մաքրում  
են նրա կեղեր, երկարությամբ կարում րարակ շեր-  
աերով և քերում սերմերը։ Հետո դրանք դցում են  
շրի մեջ, որ գառնությունը կորցնեն։ Այնուհետև  
յուրաքանչյուր շերտը ոլորում ու կտրաաում են  
այսպես, ինչպես ոշտան։ Սատցվում են բաց կա-  
նալ դույնի բարակ թելեր։ Առանձին կաթսայի  
մեջ շարունակ խառնելով տաքացնում են մեղրը։  
Սա շատ թանձր չպիտի լինի։ Երբ տեսնում են, որ  
մեղրը պատրասա է, նրա մեջ զցում են բաղրի-  
ջանի թելերը և խառնում։ Մատի վրա փորձում  
են՝ եթե մեղրը մաաին կաղզում է, ուրեմն կարելի  
է կրակի վրայից վերցնել, մուրարան պաարասա  
է։ Բուրմունքի համար մուրարայի մեջ դցում են  
«հիլի»։ Հատիկներ։

Նոյն բաղրիջանից պաարաստում են և մի  
ուրիշ հետաքրքիր մուրարա։ Կարում են բաղրի-  
ջանի միայն գլխի մսու մասը, մաքրում կճեպը  
և կլորացնում բնկույղի շափ։ Մի ժամ զրի մեջ  
պահելուց հետո, կլորացված բաղրիջանները գր-  
ցում են նախօրոք պաարասաած մեղրի մեջ և  
եփում նախօրդի նման։ Այս մուրարան, դրեթե  
չի տարրերվում բնկույղի մուրարայից։

Մսեղենից ուաում էին աավարի, ոչխարի,

իողի և թոշունի եփած, տապակած, իորոված,  
ծեծած միս (գոլմա, քուֆտա, կոտլետ)։ Ղվլաբ-  
շի հայր չէր ուաում ձիու և գոմեշի միս։

Ծեծած մսից պաարաստում են ոլովա-քա-  
րար, ոգումա։ ռՔուֆտայի միսը ծեծում են  
փայտե մուրճով, մինչև լավ փափկի, ապա շինում  
գնդիկներ և զրի մեջ եփում։ Սեղանին այն մա-  
տուցում են տաքացրած յուղով։ Առանձին հաճու-  
քով են պաարաստում «հարիսան»։ Վերցնում են  
ցորենի ձավար և ոչխարի, հավի կամ հնդկահա-  
վի միս եփում են մեծ կաթսայում անընդհատ  
խառնելով։ Ոսկուները հեռացնելուց հետո շարու-  
նակում են եփել փայտե գդալով խառնելով։ Սյու-  
պես միսն ու ձավարը եփելով ձուլվում են։ Հա-  
րիսանն եփում են ամրող գիշերը, իսկ առավու-  
յան նախաճաշին ուտում յուղով և ողիրայով։  
Ղվլաբում ռԱսավածածնա եկեղեցու մոտ կար  
հարիսանա, ուր վճարով ցանկացած ժամին կա-  
րելի էր հարիսա ուաել։

Ղվլաբում մեծ պաշարներ էին անում ոչ  
միայն մրգերից և րանջարեղենից, այլև մսից։  
Պատրաստում էին «զողուրմա»։ Դա ոչխարի կամ  
հորթի տապակած միս է, որը լցնում են կավե ա-  
մանի մեջ և երեսը ծածկում ոչխարի ճարպի հաստ  
շերտով։ Մյուա տեսակը արեկ տակ շորացրած  
միսն էր, որ Ղվլաբում անվանում էին «կախ-միս»։  
Չմեռվա պաշարներից էր և ալյուրից պաարաս-  
տած որշաան (լաիշա), որ շորացնում, բովում  
էին և պահում ուր արկդի մեջ, իրշտայից պաա-  
րաստում էին մսով որշաափլավ։

Ղվլաբում օդտագործել են հավի, սագի, բադի  
և հնդկահավի ձվեր։ Այս կերել են և օդտագործել  
զանազան կերակուրների և թիվածքների մեջ։

Թերեք գեար և կասպից ծովը շաա հարուսա  
են ձկներով։ Այսաեղ կան սպիտակ և կարմիր  
ձկներ՝ օրագուլ (լոսդի), թառափ, շամայի, ծա-  
ծան, սուլա, լոքո, տառեխ և այլն։ Մեծ շուկայում  
միշտ կարելի է ճարպկ թարմ, շորացրած, ապրի-  
տած, աղած ձկնեղեն։ Խավիարը բերվում էր Կաս-  
պից ծովից։ Խեցգեաին շաա սակավ է պաատահում  
շուկայում։

Ղվլաբում շատ քիլ տուն կար, որ կով կամ  
գոմեշ շունենար։ Կաթից պաարաստում էին մա-  
ծուն, կարագ, պանիր ու ռժաժիկ։ Կարագ ստա-  
նում էին հում կաթի սերից՝ փայտե խնոցիով։  
Կարագ սաանալուց հետո տակառում մնում է,  
այսպես կոշված «արյանք» (թան), որը խմում են

որպես գովացուցիլ խմիչք, Մեր դարի սկզբից  
Ղզլար մուտք դործեց սերդատ մեքենան:

Պանրի համար որպես մերան վերցնում են  
նոր ծնված գառան ստամոքսը, աղում են ու շո-  
րացնում, ՇՄայան գցում են տաք կաթի մեջ և  
այն մտկարդվում է, Հետո մածուկը լցնում նա  
տոպրակի մեջ ու մի տեղից կախում, որ շիճուկը  
հոսի: Ստացվում է պանիրը: Վերջինս երկար պա-  
հելու համար դնում են կավե ամանով աղաջրի  
մեջ: Մածուն պաարաստելու համար որպես մե-  
րան գործ են ածում թթված սերուցքը:



21. Ղզլարցիների աարազով կին և տղամարդ:

Ղզլարցին դինի միջա օգաագործել է: Կրնուն-  
քին և մեռելոցին և ուրիշ պաաշճանավոր առիթ-  
ներով խմում էին բազմազան խմիչքներ՝ դինի,  
օղի, կոնյակ, կենացի վերջում ասում էին «կեն-  
դանություն», որի պատասխանը լինում էր՝ «սաղ  
իկես»: Խնջուլքներին սեղանը կառավարելու հա-  
մար հաառուկ թամադա («զոլիրազի») էին հրա-  
վիրում:

Կար ժամանակ, երր դինին խմում էին եր-

կար կանթով դավաթից, որը ձեռքից ձեռք էր անց-  
նում: Յուրաքանչյուրը խմելուց հետո տալիս էր  
իր հարեանին: Այս դավաթները այժմ գործածու-  
թյան մեջ չեն: Ծաշի նստելուց առաջ րոլոր հյու-  
րերը լվանում էին ձեռքերը պղնձե լադանի մեջ:  
Ձուրը հյուրի ձեռքերին լցնուր էր տան աղջիկը  
կամ ջանել հալսը, նա էր մատուցում նաև սըր-  
րիչը: Ծաշի սեղանին հյուրերի տոշե դրվում էին  
անձեռուցիկներ:

Առավոտյան նախաճաշին ընդունված էր  
խմել զոմեշի կաթի սերով սուրճ, իսկ երեկոյան՝  
թեյ: Հնում ուառում էին մաաներով: Ապուրը ու-  
տում էին փայտե գդալներսվ, ըստ հին հայկա-  
կան սովորության ճաշի էին նստում՝ առաջ տղա-  
մարդիկ, հետո կտնայք: Ավագ տանտիկինը ճա-  
շում էր տղամարդկանց հետ:

Ղզլարցիք ուտում էին օրական երեք անդամ:  
Առավոտյան, երր գործի էին շաապում, ուառում  
էին ուտքի վրա՝ պանիր, հաց, ձկածեղ և կտմ ուրիշ  
թեթե րան: Երկրորդ անդամ՝ կեսօրին, ամրոգչ  
րնաանիքով: Սեղանի շուրջ նստում էին ավազու-  
թյան կարգսվ, աան մեծի գլխավորությամբ: Դա  
ճաշն էր: Ընթրում էին նույնական րոլորը միասին:

Հավաացյալ հայերը, մանավանդ կանայք,  
խստիվ պահպանում էին եկեղեցական րուր պա-  
սերը, որոնց օրերի ընդհանուր թիվը (հաշված  
մեծ պասը՝ 49 օր) հասնում էր 140-ի: Պասի օրե-  
րին սննդից հանվում էին միսր, ծուկը և կաթնե-  
ղենը: Գործ էին ածում միայն ձեթ, րանզարեղեն  
և բնդեղեն, խաղող ուաելը արդելված էր մինչեւ  
ասավածածնի առնր:

Ղզլարում ծխախոտ էին ծխում միայն մեծա-  
հասակ ադամարդիկ: Կանանց մեջ շատ սակավ էր  
պաաահում ծխու: Երեխաներին խսահիվ արդելված  
էր ծխելը: Մասնակի երեռյթ էր քթախոտի դոր-  
ծածությունը միայն ծերերի ու պառավների կող-  
մից: Միսր էին զլանակներ, լիրուխներ և ուլու-  
լա: Միսրիուր գահում էին սքիսեթիւ մեջ, որը  
կախում էին գոառուց: Քթախոտի համար գործ էին  
ածում հատուկ առու:

Ղզլարում աարածված ճաջատեսակներից եռ-  
աեսաներից են՝ փլավը, սմսախան (րադրիշա-  
նով), «գողինադր», «նաղուկը», «որշտա-հալ-  
վան», «թաթարուն», «գոշարը» և այլն, որոնց  
պաարասաման եղանակները արված են հավել-  
վածում:

Զգեստ և զարդարանի: Հայերը, դադթելով  
Ղզլար, երկար ժամանակ պահպանեցին իրենց

Հին տարաղը, Կանանց և մեծահասակների, լքավորների և հարուստների զգևանքները իրարից տարրերվում էին, Տարրեր էր մանավանդ տոնականը, Սակայն հագուստի ձեռքը ժամանակին համբութաց հետղհետե փոփոխության էին ենթարկվում, Այսօր Դզլարցու հին տարաղից գըթե ոչինչ չի մնացել, այն առավելապես ելքոպակն է:

Տղամարդկանց զգեստը իր ձեռվ և առանձին մասերով շատ քիչ էր տարրերվում Կովկասի ժողովորդների զգեստից, Թացակայում էին միայն բաղմագույն շալվարներն ու բաճկոնները:

Դզլարցին հագնում էր կողքից կոճկվող ցածր օծիքով շապիկ, Նրա վրայից հագնում էր սաաինն կամ քաթանե (առներին՝ մետաքսյա) «արիալուղ», որը հասնում էր մինչև ծնկները: Սա կոճկվում էր մինչև գոտին առշեից՝ «գայթանից» հյուսված մանը կոճակներով: Արիալուղի վրայից հագնում էր ավելի երկար, սկզբան մուգ գույնի մահուգե շուխա՝ դոտկատեղում հավաք մեջքով: Կաշված արծախարդ գոտին կտպում էր չուփայի վրայից: Գլուխը ծածկում էր ոչխարի կամ գառան մորթու փափախով: Լայն շալվարի ծայրերը գնում էր ոչաքմաններին մեջ, Զմունը հագնում էր քուրք: Երիտասարդները գոտուց կտիում էին արծաթե «խանչալ»:

Կանայի նազնում էին պարսկական մեաաքսից երկար շորի Մետաքսյա կոտին լինում էր տարրեր գույնի: Շորի տակից հայուհին հագնում էր սփոխան», որ կապվում էր կոնքի վրա: Փոխանի ներքեւ երեացող մասը կարվում էր ավելի թանկագին կտորից: Շորի վրա կինը հագնում էր սատինե երկար արխալուղ, որի կրծքաակը բաց էր և կոճկվում էր միայն գոտու վրա: Շորի թեկերը արմունկից ներքե կարված էին և նախշուն եգերված բարակ «ղայթանով»: Կարվածքները կոճկվում էին շատ մանը կոճակներով: Մինչև մեր գարի սկիզբը շահել կանայք և աղջիկները մեջքներին կապում էին արծաթյաղոտի, իսկ մեծահասակները մինչև օրս էլ այն մի քանի անգամ փաթթում են երկար րրգե շալով: Աշխատանքի ժամանակ կանայք կապում էին շթից կարած գոգնոց:

Կանայք հագնում էին սուր քթերով և աափակ կրունկներով կոշիկներ: Թայց հեղափոխությունից շատ առաջ երիտասարդությունը հրաժարվեց ծուռ քիթ կոշիկներից և հագնվում էր ելքոպակն ձեռին կոշիկներ:

Դզլարի կանայք զլուխը կապում էին երկու ձեփաշորով՝ «լաշագ» և «շիքլա»:

Լաշագը կարում էին սպիաակ «տյուլից», որով ծածկում էին ամրող զլուխը: Լաշագի մի ծայրը րոնում էին մի ձեռքով, իսկ մյուսով լաշագի մյուս ծայրը տանում էին կղակի աակով (ծախից աշ) գեղի ետ ու երկու ծայրերը ծոծրակի վրա ամրացնում գնդասեղով: Սպիտակ լաշագը



22. Կին՝ Դզլարի տարազով:

ճակատի վրա պարուրվում էր 6 սմ լայնությամբ սկզբանի աալասի կամ թավշի կառուվ՝ «ղինգա» (տե՛ս նկ. 24): Սրա ծայրերը նույնպես քորոցով ամրացվում էին ծոծրակի վրա:

Չիքլան էլ սպիտակ «տյուլից» է, որի եգրերը (ինչպես և լաշագինը) վերշտնում են գեղեցիկ ասեղնագործ ժանյակով: Լաշագը շիքլայից կրկնակի երկար է: Չիքլան գցում են գրեթե նույն ձեռվ, ինչպես լաշագը: Չիքլայի վրա էլ «գինգա» կա, որի ծայրերը ամրացվում էին, արգեն, գեղեցիկ ակնեղեն քորոցով: Չիքլա գցած օրիորդը կամ

շահել կինը նրա երկու կողմից բաց էր թողնում գեղեցիկ հյուսված սև փարթամ ծամերը Հարսանիքին նորահարսը պարապոր էր հազնել չիքլա և ճակատին կապել կաըմիր դինգաւ Այս տարագով նա մնում էր երկու շարաթի Չիքլա հազնելու սովորությունը Ղղլարի կանայք հավանարար փոխ են առել Մողոկի կանանցից Չիքլան շուտ դուրս և կավ գործածությունից, իսկ լաշագո մեծահասակ կանայք մինչեւ օրս էլ պահել են:



23. Տարեց կին առօրյա զգեստով:

XX դ. սկզբին նորահարսի չիքլալին՝ փոխարինեց «ֆատան»:

Օրորոցի երեխային ռկոնդղում էին, այսինքն՝ պարուրում էին սպիտակ զրերի մեջ (իսանձարուր): Օրորոցը կախված էր լինում առաստաղից այնպես, որ դիշերն այն դանվեր մոր կողքին: Քիչ մեծանալուց հետո, երեխային կերակրելիս նրա կրծքին կապում էին մոմլաթից գողնոց:

Հայուհին սիրում էր զարգեղեն: Հյուր գնալիս նա հագնում էր իր բալոր զարդերը: Աղջիկները գզից կախում էին հայկական կամ վրացական հինգ գրամներ: Աղջկա մատի ոսկե մատանին նշանակում էր, որ նա արդեն նշանված է: Տարածված

էին՝ վղի գեղեցիկ մանյակը, կրծքի ոսկե խալը՝ ագամանղներով և ոսկե շղթայով, մատների աղամանգյա և այլ քարերով մասանիները, ոսկե ապարանշանների պահանջաններ, ականջօղեր և այլն: Ապարանշանների վրա տարածված փողաքանդակներն էին՝ իրար միացված ձեռքերը, աղջկա, ծիու, օձի դրուխներ և այլն:

Բանկարժեք իրերը կուտակում էին ժամանակի ընթացքում տնեղ օրվա համար: Կ անցնում էին սերնդից սերունդի Ամուսնացողները որպես օժիտ հետները տանում էին թանկադին դաշտերը, որոնք դառնել էին արդեն աղջային ապարակի անգրաժեշտական մասը:

Պսակի դիշերը նորահարսը հագնում էր իր բոլոր զարդերը: Դրանց տրվում էր թալիսմանների ու հմայինների նշանակություն:



24. Կին Ղղլարի ապարակով և գլխի հարդարանքով:

Կանանց և տղամարդկանց մեջ մարմնի մասերը դաշելու սովորություն չկար: Ղղլարցին վերին աստիճանի մաքրասեր էր: Ամեն շարաթ նա լողանում և լողացնում էր երեխաներին: Լողանում էին աանը, կամ վրացական հինգ գրամներ: Ուրիշ կար չուը և վառարան: